ՔԱՂՎԱԾՔ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ №1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ		EXTRACT FROM "CONVERSE BANK" CJSC *GENERAL ANNUAL* MEETING MINUTES №1

ք. Երևան 27-ը հունիսի, 2013թ.	Yerevan June 27, 2013
2013թ. հունիսի 27-ին, ժամը 18:00-ին "Կոնվերս Բանկ" փակ բաժնետիրական ընկերության գտնվելու վայրում՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Վ. Սարգսյանի փողոց, 26/1 հասցեում տեղի ունեցավ "Կոնվերս Բանկ" փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը (հետագայում՝ Ընդհանուր ժողով): Ժողովին մասնակցել են ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերեր.	The Annual General Shareholder Meeting of Converse Bank closed joint stock company (hereinafter the General Meeting) was held on June 27, 2013, 18:00 at Converse Bank CJSC: 26/1 Vazgen Sargsyan Street, Republic Square, Yerevan, Armenia. The meeting was attended by the following shareholders eligible for participation in the General Meeting:
• "Ադվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս" ԷԼԷԼՍԻ՝ **15390** ձայնի իրավունքով, ի դեմս տնօրեն Ջուան Պաբլո Գեչիդջյանի,	• Advanced Global Investments LLC, represented by Director Mr. Juan Pablo Gechidjian with **15390** votes.
• Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ **810** ձայնի իրավունքով, ի դեմս Արսեն Գամաղելյանի (Տեր Հովել քահանա):	• The Armenian Saint Apostolic Church, represented by Arsen Gamaghelyan (Ter Hovel Archpriest) with **810** votes.
Ժողովի մասին ծանուցված էին.	The below listed parties were notified about the Meeting:
• "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Խորհրդի նախագահն ու անդամները,	• Chairman and members of Converse Bank CJSC Board
• "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Գործադիր տնօրենը,	• Converse Bank CJSC CEO
• "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր	• Converse Bank CJSC Head of Accounting Department / Chief Accountant,

հաշվապահը, • "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները, • ՀՀ Կենտրոնական Բանկը, • Բանկի՝ հաշվետու տարվա արտաքին աուդիտ իրականացնող անձի ղեկավարը,	• Converse Bank CJSC Head and members of Internal Audit • Central Bank of Armenia, • External Auditor of the Bank for the reporting year
որոնցից Ժողովի նիստին ներկա էին՝ • "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Խորհրդի նախագահ Արմեն Տեր-Տաճատյանը, • "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Խորհրդի անդամներ Ջուան Պաբլո Գեչիդջյանը և Արսեն Գամաղելյանը (Տեր Հովել քահանա) • "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Գործադիր տնօրեն Տ. Դավթյանը, • "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահ Գ.Հարությունյանը, • "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Ներքին աուդիտի ղեկավար Լ.Յորդանյանը, • ՀՀ ԿԲ լիազոր ներկայացուցիչներ Լուսինե Մարգարյանը, Դավիթ Գալստյանը և Բորիս Հովհաննիսյանը, • Բանկի՝ հաշվետու տարվա արտաքին աուդիտ իրականացնող անձ "Գրանթ Թորնթոն" ՓԲԸ-ի ներկայացուցիչներ	Of the above mentioned, the following persons attended the Meeting: • Armen Ter-Tachatyan, Chairman of "Converse Bank" CJSC Board • Juan Pablo Gechidjian and Arsen Gamaghelyan (Ter Hovel Archpriest), "Converse Bank" CJSC Board Members • T. Davtyan, "Converse Bank" CJSC CEO • Gohar Harutyunyan, Head of Converse Bank CJSC Accounting Department / Chief Accountant • L.Yordanyan, Head of Converse Bank CJSC Internal Audit Department • Lusine Margaryan, Davit Galstyan and Boris Hovhannisyan, CBA authorized representatives • Armen Hovhannisyan and Inessa Mkrtchyan, representatives of Grant Thornton CJSC, the External Auditor of the Bank for the reporting year.

ՔԱՂՎԱԾՔ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ* №1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ		EXTRACT FROM "CONVERSE BANK" CJSC *GENERAL ANNUAL* MEETING MINUTES №1

Արմեն Հովհաննիսյանը և Ինեսսա Մկրտչյանը: Հաշվի առնելով, որ "Կոնվերս Բանկ" ՓԲԸ տեղաբաշխված քվեարկող հասարակ (սովորական) բաժնետոմսերի ձայների գումարային քանակը կազմում է 16200 ձայն, իսկ Ընդհանուր ժողովին մասնակցող բաժնետերերին պատկանող ձայների գումարը հավասար է 16200 ձայնի՝ հետևաբար "Բաժնետիրական ընկերությունների մասին" ՀՀ օրենքի 77 հոդվածի համաձայն Ընդհանուր ժողովը համարվեց իրավասու և հայտարարվեց բացված: Ընդհանուր ժողովը նախագահում էր Արմեն Տեր-Տաճատյանը, իսկ ժողովի քարտուղարն էր "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Ադմինիստրացիայի Գրասենյակային գործառնությունների բաժնի պետ Լիլիթ Սարգսյանը:	Whereas the total number of allocated common (ordinary) voting shares of Converse Bank CJSC amounted to 16,200 and the total number of votes owned by shareholders participating in the General Meeting equaled 16,200, therefore the General Meeting was deemed valid under the RA Law on Joint Stock Companies – Article 77, and was declared open. Mr. Armen Ter-Tachatyan presided at the General Meeting and Ms. Lilit Sargsyan, the Head of Converse Bank CJSC Office Operation Unit, was the Secretary of the Meeting.
ՕՐԱԿԱՐԳ	**AGENDA**
2. "Կոնվերս Բանկ" փակ բաժնետիրական ընկերության 2012 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված շահույթների բաշխման մասին: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին:	2. Allocation of profits earned by Converse Bank closed joint stock company due to 2012 financial activities; Payment of annual dividends

ՔԱՂՎԱԾՔ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ №1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ		EXTRACT FROM "CONVERSE BANK" CJSC *GENERAL ANNUAL* MEETING MINUTES №1

2-ՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ	AGENDA ITEM 2
Զեկուցեց "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահ Գ.Հարությունյանը "Կոնվերս Բանկ" փակ բաժնետիրական ընկերության 2012 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների մասին: Տիկին Հարությունյանը նշեց, որ "Կոնվերս Բանկ" փակ բաժնետիրական ընկերության 2012 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում 2012թ. Բանկի զուտ շահույթը համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կազմել է 324.3մլն. ՀՀ դրամ, իսկ կուտակայինը 01/01/2013թ. դրությամբ՝ 7,980.7 մլն. ՀՀ դրամ: Բանկի 2012թ. զուտ շահույթը ՀՀ Կենտրոնական Բանկի կանոնակարգերի և այլ իրավական ակտերի համաձայն կազմել է 3,077.8 մլն. ՀՀ դրամ, իսկ կուտակայինը 01/01/2013թ. դրությամբ՝ 7,007.1 մլն. ՀՀ դրամ:	Gohar Harutyunyan, Head of Converse Bank CJSC Accounting Department / Chief Accountant reported on 2012 financial performance of Converse Bank CJSC. Ms. Harutyunyan informed that as the result of 2012 financial performance of Converse Bank CJSC, the 2012 net profit of the Bank amounted to AMD 324.3M by International Financial Reporting Standards, and the Retained Earnings amounted to AMD 7,980.7M as of 01/01/2013. The Bank's net profit for 2012, as per CBA Regulations and other legal acts, constituted AMD 3,077.8M, and the Retained Earnings reached 7,007.1M as of 01/01/2013.
Ելույթ ունեցավ Արմեն Տեր-Տաճատյանը և առաջարկեց հաշվի առնելով, որ գլխավոր պահուստի առկա մնացորդը պակաս է Կանոնադրական հիմնադրամի 50 տոկոսից, համաձայն ֆինանսական հաշվետվությունների	Mr. Ter-Tachatyan took the floor and proposed that since the available balance of General Reserve was less than 50% of the share capital, in compliance with International Financial Reporting Standards, allocate 20% of AMD 324.3M net profit for 2012, totaling

միջազգային ստանդարտների 2012թ.-ի 324.3 մլն. ՀՀ դրամ զուտ շահույթի 20 տոկոսը 64,860,000 ՀՀ դրամը հատկացնել գլխավոր պահուստին, իսկ մնացածը՝ 259,440,000 ՀՀ դրամը ավելացնել չբաշխված շահույթին:

Ըստ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի՝ 2013թ. առաջին եռամսյակի գործունեության ֆինանսական արդյունքով Բանկը կրել է վնաս, որը չի գերազանցում նախորդ ֆինանսական տարիների չբաշխված զուտ շահույթի կուտակային գումարը:

Քանի որ այս պահին Բանկի կրած կորուստները (վնասները) չեն գերազանցում 01/01/2013թ. Բանկում առկա 7,007.1 մլն. ՀՀ դրամ չբաշխված զուտ շահույթը, Արմեն Տեր-Տաճատյանը առաջարկեց նախորդ ֆինանսական տարիների չբաշխված զուտ շահույթի 01/01/2013թ. կուտակային գումարի մի մասը՝ 287,922,462 ՀՀ դրամը կամ 4.1090%-ը, որպես շահութաբաժիններ վճարել բաժնետերերին, որից 287,915,862 ՀՀ դրամը՝ սովորական բաժնետոմսերի դիմաց, իսկ 6,600 ՀՀ դրամը՝ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց:

Արմեն Տեր-Տաճատյանը առաջարկեց նախորդ ֆինանսական տարիների չբաշխված զուտ շահույթի 01/01/2013թ. կուտակային գումարի մի մասը՝ 339,725.0 հազ. ՀՀ դրամը կամ 4,8483 %-ը,

AMD 64,860,000, to the General Reserve, and to add the remaining amount of AMD 259,440,000 to the retained profits.

Under the RA laws, the Bank made loss based on 1Q 2013 financial results; however the loss incurred by the Bank as of the particular date did not exceed the accrued amount of past-period net retained profit.

Since the loss made by the Bank to date did not surpass the net retained profit of AMD 7,007.1M at 01/01/2013, Mr. Ter-Tachatyan proposed to pay dividends to shareholders at 4.1090% (or AMD 287,922,462) of the net retained profit of the past financial years accrued as of 01/01/2013; of which AMD 287,915,862 for ordinary shares and AMD 6,600 for preference shares.

Armen Ter-Tachatyan proposed to pay a part of retained net profit at 01/01/2013 – AMD 339,725.0 or 4.8483%, as dividends to the shareholders, of which AMD 339,718,400 for common shares and AMD 6,600

որպես շահութաբաժիններ վճարել բաժնետերերին, որից 339,718,400 ՀՀ դրամը՝ սովորական բաժնետոմսերի դիմաց, իսկ 6,600 ՀՀ դրամը՝ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց:	for preference shares.
Ելույթ ունեցավ "Ադվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս" ԷԼԷԼՍԻ տնօրեն Ջուան Պաբլո Գեչիդջյանը և առաջարկեց հիմք ընդունելով "Կոնվերս Բանկ" ՓԲԸ-ի ներկայիս ֆինանսական կայուն վիճակը, նախորդ ֆինանսական տարիների չբաշխված զուտ շահույթի 01/01/2013թ. **կուտակային գումարից** 287,922,462 ՀՀ դրամը կամ 4.109%-ը, որպես շահութաբաժիններ վճարել բաժնետերերին, որից 287,915,862 ՀՀ դրամը՝ սովորական բաժնետոմսերի դիմաց, իսկ 6,600 ՀՀ դրամը՝ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց:	Juan Pablo Gechidjian, Director of Advanced Global Investments LLC proposed the following – given the current financial sustainability of Converse Bank CJSC, pay dividends to shareholders at 4.109% of **retained profit** as of 01/01/2013 or AMD 287,922,462; of which AMD 287,915,862 for common shares and AMD 6,600 for preference shares.
Ելույթ ունեցավ Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու լիազոր անձ Արսեն Գամաղելյանը (Տեր Հովել քահանա) և հայտնեց իր համաձայնությունը Ջուան Պաբլո Գեչիդջյանի՝ բաժնետերերին շահութաբաժիններ վճարելու առաջարկի հետ:	The Armenian Saint Apostolic Church Representative Arsen Gamaghelyan (Ter Hovel Archpriest) voiced his consent to Juan Pablo Gechidjian's proposal for payment of dividends to shareholders.
Որոշեցին՝	**Decision:**
1. 2012թ. "Կոնվերս Բանկ" փակ բաժնետիրական	1. Take AMD 324.3M as the 2012 net profit of Converse Bank CJSC under the IFRS and

ՔԱՂՎԱԾՔ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ *ԸՆԴՀԱՆՈՒՐ* *ԺՈՂՈՎԻ* №1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ		EXTRACT FROM "CONVERSE BANK" CJSC *GENERAL* *ANNUAL* MEETING MINUTES №1

ընկերության զուտ շահույթը, համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, ընդունել 324.3 մլն. ՀՀ դրամ և 2012թ. արդյունքներով շահութաբաժիններ չվճարել:	refrain from payment of dividends based on 2012 results.
2. "Կոնվերս Բանկ" փակ բաժնետիրական ընկերության նախորդ ֆինանսական տարիների չբաշխված զուտ շահույթի 01/01/2013թ. կուտակային գումարի մի մասը՝ 287,922,462 ՀՀ դրամը կամ 4.109%-ը, որպես շահութաբաժիններ վճարել բաժնետերերին, որից 287,915,862 ՀՀ դրամը՝ սովորական բաժնետոմսերի դիմաց, իսկ 6,600 ՀՀ դրամը՝ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, համապատասխանաբար՝ • "Ադվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս" ԷԼԷԼՍԻ-ին՝ 273,520,069 ՀՀ դրամ սովորական բաժնետոմսերի դիմաց, 6,600 ՀՀ դրամը՝ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, • Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն՝ 14,395,793 ՀՀ դրամ սովորական բաժնետոմսերի դիմաց:	2. Pay dividends to shareholders form the earnings accumulated by Converse Bank CJSC as of 01/01/2013, to the amount of AMD 287,922,462 or 4.109%; of which AMD 287,915,862 for common shares and AMD 6,600 for preference shares, accordingly to: • Advanced Global Investments LLC – AMD 273,520,069 for common shares and AMD 6,600 for preference shares • Armenian Saint Apostolic Church – AMD 14,395,793 for common shares.
3. 2012թ.-ի 324.3 մլն. ՀՀ դրամ զուտ շահույթի 20 տոկոսը՝ 64,860,000 ՀՀ դրամը հատկացնել գլխավոր պահուստին:	3. From 2012 net profit of AMD 324.3M, allocate 20% or AMD 64,860,000 to the general reserve.

ՔԱՂՎԱԾՔ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ №1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ		EXTRACT FROM "CONVERSE BANK" CJSC *GENERAL ANNUAL* MEETING MINUTES №1

4. Հաստատել "Կոնվերս Բանկ" փակ բաժնետիրական ընկերության նախորդ ֆինանսական տարիների չբաշխված զուտ շահույթի բաշխման մասին ցուցակը:	4. Approve the list for distribution of dividends from the net retained earnings of Converse Bank CJSC;
5. Շահութաբաժինների վճարումը արտոնյալ բաժնետոմսերի դիմաց կատարել մինչև **27.07.2013թ.**, իսկ սովորական բաժնետոմսերի դիմաց՝ մինչև **27.09.2013թ.**	5. Effect the payment of dividends against preference shares by **27.07.2013** and against common shares by **27.09.2013**;
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:	6. This resolution takes effect from the date of approval.
Կողմ՝ 16200 ձայն **Դեմ՝ 0 ձայն** **Ձեռնպահ՝ 0 ձայն**	**Aye 16200 votes** **Con 0 votes** **Abstained 0 votes**

ՔԱՂՎԱԾՔՆ ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է
EXTRACT IS TRUE TO THE ORIGINAL

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝
ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ

EXECUTIVE DIRECTOR
TIGRAN DAVTYAN

ConverseBank Բոլորի համար	**«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**	<u>Հաստատված է</u> "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Բաժնետերերի տարեկան Ընդհանուր ժողովի 27.06.13թ. որոշմամբ /թիվ 1 արձանագրության 2-րդ հարց/ Ժողովի նախագահ՝ Արմեն Տեր-Տաճատյան

Ց Ու Ց Ա Կ

"Կոնվերս Բանկ" փակ բաժնետիրական ընկերության
նախորդ ֆինանսական տարիների չբաշխված զուտ շահույթի բաշխման մասին

Ազգանուն, անուն	Կանոնադրական կապիտալում ներդրված գումար ՀՀ դրամ	Տարվա ընթացքում կանոնադրական կապիտալում ներդրված միջին կշռված գումար ՀՀ դրամ	Բաժնետոմսերի տեսակները	Վճարվելիք շահութաբաժին ՀՀ դրամ
Advanced Global Investments LLC	4,617,000,000.00	4,617,000,000.00	Սովորական	273,520,069
	33,300.00	33,300.00	Արտոնյալ	6,600
Ընդամենը	4,617,033,300.00	4,617,033,300.00		**273,526,669**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	243,000,000.00	243,000,000.00	Սովորական	14,395,793
Ընդամենը	4,860,033,300.00	4,860,033,300.00		**287,922,462**

	GENERAL ANNUAL MEETING OF CONVERSE BANK CLOSED JOINT-STOCK COMPANY SHAREHOLDERS	**Approved** Based on Converse Bank CJSC Annual General Meeting of Shareholders of Resolution at 27.06.2013 (Minutes #1 Item 2) Armen Ter-Tachatyan Chairman of Meeting

LIST

Distribution of retained earnings of Converse Bank close joint stock company

Name	Equity participation	Average weighted annual equity participation	Share type	Dividends to be paid
Advanced Global Investments LLC	4,617,000,000	4,617,000,000	Ordinary	273,520,069
	33,300	33,300	Preferred	6,600
Total Advanced Global Investments LLC	**4,617,033,300**	**4,617,033,300**		**273,526,669**
Mother See of Holy Etchmiadzin	243,000,000	243,000,000	Ordinary	14,395,793
Total	**4,860,033,300**	**4,860,033,300**		**287,922,462**